

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ  
ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ  
ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի մասին»  
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության 2008 թվականի նոյեմբերի 26-ի ՀՕ-56-Ն օրենքի  
(այսուհետ՝ Օրենք) 2-րդ հոդվածի 2-րդ մասում «սանդղանման» բառը փոխարինել  
«սանդղածն» բառով:

**Հոդված 2.** Օրենքի 4-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 1) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դատարանների որոշումների,  
վճիռների և դատավճիռների,» բառերից առաջ հանել «Լեռնային Ղարաբաղի  
Հանրապետության վարչապետի,» բառերը,
- 2) «վարչապետի» բառը փոխարինել «պետական նախարարի» բառով,
- 3) «վերահսկիչ» բառը փոխարինել «Հաշվեքննիչ» բառով,
- 4) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի  
ղեկավարի,» բառերից հետո լրացնել «Արցախի Հանրապետության Նախագահի  
աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության պետ-  
աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի,» բառերը:

**Հոդված 3.** Օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասում՝

- 1) «վարչապետի» բառը փոխարինել «պետական նախարարի» բառով,
- 2) հանել «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության  
աշխատակազմի ղեկավարի,» բառերը,
- 3) «վերահսկիչ» բառը փոխարինել «Հաշվեքննիչ» բառով,
- 4) «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի աշխատակազմի  
ղեկավարի,» բառերից հետո լրացնել «Արցախի Հանրապետության  
Նախագահի աշխատակազմի կառավարության գործերի կառավարչության  
պետ-աշխատակազմի ղեկավարի առաջին տեղակալի,» բառերը:

**Հոդված 4.** Օրենքի 7-րդ հոդվածից հանել «կառավարությանն առընթեր» և «կառավարությանն առընթեր Լեռնային Ղարաբաղի Հանրապետության» բառերը:

**Հոդված 5.** Օրենքի վերնագրում, 1-8-րդ հոդվածներում, հավելվածում, բացառությամբ 2-րդ հոդվածի 2-րդ և 3-րդ մասերի ««ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ-ԱՐՅԱԽ»» բառերի, «Լեռնային Ղարաբաղի» բառերը փոխարինել «Արցախի» բառով:

**Հոդված 6.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ՆԱԽԱԳԱՀ

Բ. ՍԱՀԱԿՅԱՆ

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**

«ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԶԻՆԱՆՇԱՆԻ ՄԱՍԻՆ» ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱՔԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՅՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

|    |   |
|----|---|
| 1. | <p align="center"><b>Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը</b></p>  |
|    | <p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը ընդունվել է 2008 թվականի նոյեմբերի 26-ին և կարգավորում է Լեռնային Ղարաբաղի զինանշանի նկարագրությունը և գործածման կարգը: Արցախի Հանրապետության 2017 թվականի Սահմանադրությամբ նախատեսված կառավարման համակարգի առանձնահատկություններով պայմանավորված՝ անհրաժեշտություն է առաջանում կատարել համապատասխան փոփոխություններ Արցախի Հանրապետության խորհրդանիշ հանդիսացող զինանշանի մասին օրենքում:</p>  |
| 2. | <p align="center"><b>Առաջարկվող կարգավորման բնույթը</b></p>   |
|    | <p>«Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Արցախի Հանրապետության օրենքի նախագիծը մշակվել է՝ հիմք ընդունելով Արցախի Հանրապետության Սահմանադրությամբ, Արցախի Հանրապետության Նախագահի 2015 թվականի սեպտեմբերի 25-ի ՆՀ-103-Ն հրամանագրով սահմանված կարգավորումները, որոնց համապատասխան օրենքից հանվել են «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարչապետի որոշում» և «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար» բառերը, կատարվել են փոփոխություններ նախկինում կառավարությանն առընթեր մարմիններին հղումները պետական կառավարման այլ մարմիններին համապատասխանեցնելու ուղղությամբ, ըստ անհրաժեշտության «վարչապետ» բառը փոխարինվել է «պետական նախարար» բառերով, իսկ «վերահսկիչ պալատ» բառերը փոխարինվել են «Հաշվեքննիչ պալատ» բառերով:</p> <p>Նախատեսվում է նաև օրենքի ամբողջ տեքստում «Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն» բառերը փոխարինել «Արցախի Հանրապետություն» բառերով:</p> |
| 3. | <p align="center"><b>Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք</b></p>   |
|    | <p>Նախագիծը մշակվել է Արցախի Հանրապետության արդարադատության նախարարության աշխատակազմի իրավական ակտերի փորձաքննության և</p>  |

|    |  |
|----|--|
|    | օրենսդրության կատարելագործման բաժնի կողմից:  |
| 4. | <b>Ակնկալվող արդյունքը</b>   |
|    | Նախագծի ընդունման դեպքում ակնկալվում է «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության զինանշանի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքը համապատասխանեցնել Արցախի Հանրապետության Սահմանադրությանը և Արցախի Հանրապետության Նախագահի հրամանագրերին: |

ԱՐՅԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

Ա. ԴԱՆԻԵԼՅԱՆ